կաւս, զանուանին Սխ-հէնտ (Սոհունդ ըստ նախնեաց) 'ի հարաւոյ Դավըխժու մեծատարած լեառն 8000´ 'ի բարձրութիւն, յորոյ մօտից ամբառնայ Տէ-ֆըրփող 11550´, և այլք բազումք շուրջ զնովաւ. և ևս հռչակաւորն Սա-ալան կամ Սա-էյլան զոր 'ի վերոյ յիշեցաք (12197´), հանդերձ բազկաւն Քարէայ, որոց ըստ հիւսիսոյ Շէյվէ֊? և Շահվէրտի լերինք. ընդ մէջ Սոհունդայ և Սաւալանայ Պահլէ-ւ լերինք. Շահկափ յելից Դավըխժու և 'ի հիւսիսոյ Սոհունդայ:

14. ԿԱԶՄՈՒԱԾ ԵՐԿՐԻ. — Կազմուած լերանցս և բնութիւն երկրին Հայոց զարմանալի ևս է քան զկուտակութիւն կոհակացն և զբարձրութիւն. թէ և ոչ ըստ չափ բաւականին քննեալ, այլ և 'ի կիսամասնեայ զննութեանց գիտնոց ոմանց (յաւէտ Գերմանացւոց) քաջ երևի՝ մեծապէս ներգործեալ 'ի Հայաստան երկրի և ջրեղէն և հրեղէն ազդմանց՝ յառաջ քան զսկիզբն և յառաջին դարս պատմական ժամանակաց. և ըստ գուշակութեան երկրաբանի ուրուք մեծի՝ ոչ շատ յառաջ քան զպատմական դարսըն ծով ծածկէր զամենայն երկիրն. եւքսինեանն և կասպիական՝ համատարածք միապաղաղք ծփային 'ի վերայ տափակացն՝ որ Հայաստան կառուցան. և տխեղերահռչակեալ ջրհեղեղն, անժխտական վկայութեամբ Գրոց սրբոց՝ ոչ ուրեք այնպէս քաջիկ հաւաստի ողողեալ զերկիր, որպէս զՀայս. զի որ քան զամենայն լեառն 15 կանգնաւ չափ վերացեալ ընդ ջուրցն տատանէր տապանն՝ նստաւ 'ի լերինս Արարատայ, և 'ի ցածնուլ ջուրցն՝ անդ իջին 'ի վայր ապրեալքն 'ի հնոյ երկրէն: Այսու վկայութեամբ և 'ի քննութենէ Աովիքայ երկրաբանի՝ ստուգի Մասեաց 'ի նախաջրհեղեան լերանցն լինել, և ջուրց ոչ շատ ալդեցեալ 'ի գագաթունս նորին. ամին նմանակից լցեն թերևս և այլք 'ի հարաւայնոց բարձր լերանց, որք չեն քննեալք: Այլ և ոչ ընդհանուր երկիրն բոլորվիմբ վերիվայր յեղափոխեալ է, քանզի և նշանք քառառաջ գետոցն Եդեմայ զոր տայ Մովսէս իբրև 1600 ամօք յետ ջրհեղեղին, տան գուշակել թէ ըստ գետոցն մարթ էր և զհետս ինչ երկրի վայրաց դրախտին նշմարել, գէթ 3400 ամօք յառաջ քան զայս՝ յորում գրէրն Մովսէս: Հետք հին ջրային ներգործութեանց և ծովու ծաւալման՝ նշմարեցաւ յԵրասխեան դաշտին, յորում յերրորդական անուանեալ գետինս՝ (terrain tertiaire) գտան բրածոյ խեցեմորթք, որոց ազգակիցք ցարդ լինին 'ի ծովափունս կասպից: Երասխեան կամ հայկական պարուն լերինք մեծաւ մասամբ յերրորդական կրոյ կազմեալ են, և վասն սպիտակութեան նիւթոյն համարի յոմանց Աք-տաղ կոչումն լերանց ոմանց և ոչ թէ սակս ձիւնանալոյ գագաթանցն. մեծ մասն հիւսիսային արևմտակողման աշխարհիս հին երրորդական հողովք է կազմեալ, յորոց և բարձունք կուտակեալք են՝ ընդ մէջ Ճորոխի, Երասխայ և Եփրատայ, և 'ի Խաղտեաց լերինս, յորս երևին և կազմածք գաճի և կաւոյ. լերինքն որ ընդ մէջ Կարնոյ և Սօղանլուի՝ յանուանէ իսկ կոչին ցարդ Քիրէճլի (կրոտ): Նշանաւոր է երրորդական կազմած հայ գետնի և առատութեամբ աղի, որ ուրեք բլուրս և քարայրս գործեալ է, որպէս 'ի Դարանաղի, 'ի Կողբ, 'ի Կաղզուան, 'ի Շարուր. և բազում ուրեք աղբերս և ճահիճս և գետակս, յորոց և Դուզլա կոչումն նոյին (աղուտ) որպէս 'ի Դերջան, 'ի Թորթում, 'ի Խնուս, 'ի Պայէզիտ: Բայց զնեպտունեան՝ այսինքն է զջրանիստ կազմած երկրիս՝ սաստկապէս այլայլեալ է պղուտոնականն, որ է հրայինն, գրեաթէ 'ի մեծի մասին աշխարհիս. որով ոչ ուրեք երևի երկիր ընդարձակ երրորդական հողովք, և երկրորդականքն ևս ոչ կարի լայնածաւալք. յորոց գլխաւոր գրելի է զԴաշտըն Շարուրայ՝ կամ զահեակ Երասխայ յԱրարատայ 'ի վայր. իսկ հեղեղահող (alluvium) երկիր մեծ՝ դաշտագետինքն են արևելեան Հայոց, Ուտի և Փայտակարան աշխարհք և Աղուանք:

15. ՀՐԱՅԻՆ ԿԱԶՄՈՒԱԾ. ՀՐԱԲՈՒՂԽՔ. ՋԵՐՄՈՒԿՔ. — Հրահող երկիր Հայոց կազմեալ է 'ի հասարակի որձաքարիւ (տրաքիտ) և պորփիւրիւ, յորմէ և ողջոյն լերինք կառուցեալ են, որպէս և Մեծին Մասեաց միակտուր պորփիւր է իրանն. և է պորփիւրս սեաւ և չեչոտ. գտանին խառն 'ի նոսին և այլ ազգք քարանց, փայլքար (աւկիթ, augite), քուարց, ֆելտափաթ, սեւաթուրծ (mélapyre) և այլք. 'ի լերինս Սպերոյ ընդ պորփիւրի գտանի և մագնիսեան երկաթ: Բազում ևս ուրեք պատալտ է կազմածն, որ և նշանակ է բուն հրաբուխ վայրաց, զի և ընդ նմին յաճախ գտանին լաւա և չեչաքար. իսկ կռանիտ սակաւ ուրեք արտաքս ցցուեալ երևի ձայռաժև, այլ զկողիւք բարձանց պատի, ընդ նմին և եղնգնաքար հրային (obsidiane) յարևմտեան լերինս. հարաւակողմն Մուրատայ յաւէտ հերձաքար միկայիւ կազմեալ է: — Խանձող քարինքն և ջերմուկք և ջրալիր բաժակք գագաթնափոս լերանց՝ ակներև վկայք են շիջելոց և նուաղելոց հրաբխից Հայաստան աշխարհի, որք թերևս ոչ ուրեք այնպէս բազմաթիւ խիտ առ խիտ գտանին որպէս յերկրի մերում, և Ճըշմարտէն յինքեանս ևս զանուն Ատրպատական աշխարհի. և գրեաթէ յամենայն լեռնապարս հայկական բարձրաւանդակին սփռեալ կան լռեալքն արդ հրաշունչ բերանք: Ի պարս Խաղտեաց բարձրն Խաչաքար (5) և այլ կատարք 'ի կողմանս Համշինու Ճանաչին հրաբուխք. 'ի բարձրաւանդակին Տայոց բազմաթիւ են հրաբխից ջրալիր խառնարանք և բազմաց երևին և ընթացք հոսանաց խանձողիցն, 'ի սահմանս Ախալցխեայ և Ջաւախաց, և 'ի Պարտիզացփոր՝ ուր Աք-Պերէ չեչաքարոտ հրաբուխ և խանձողք նորա ապակենման փայլեն: Ի լերինս Կարնոյ Սիխչիք և Սարչամ կոնաձև լերինք վաղաշէջ հրաբուխք են. Սիխչիքայ խառնարանն ցամաք է և խոտալից: Գոն և 'ի Սօղանլու լերինս, և յելից Ղարսայ բլուրք երկու գըմբեթաձևք և շրջակայ սահմանացն քարինք հրայինք: Իսկ յերրորդ կամ 'ի Վրա-Հայոց լերանց խումբս՝ նշանաւոր և մեծ քան զբազում հրաբուխս երկրի է Արագած քառահերձ գագաթամբ և ջրալիր բաժակաւն որ Գեօլ-Չէօլ կոչի, որոյ և խանձողք նմանք Ցեաննեայ լերին Սիկիլիոյ առատապէս զեղեալք. և թուի յետին վերածխութիւն նորա 'ի սկիզբն Արշակունեաց հարստութեան լեալ. երևին և 'ի կողս նորա պատառածք, զի մեծամեծ հրաբուխք Հայոց կողա-